| | |
|---|---|
| Աղքատ որբորդաց համար ագուստի | 48 65 |
| Աղքատ ուսանող տղայոց համար գնած գրեանքի . . . . . . . . | 33 32 |
| Ուսումնարանի համար եղեալ մանր ծախք . . . . . . . . . . . | 23 7 |
| Որդեգիրներին Ընկերութեան, որք շարունակում են իւրեանց ուսումը Բագու և Սանկտպետերբուրգ . . . . | 290 |
| Տպարանի համար վարձեալ տան տիրոջ տուած է սկսեալ ի 1 մարտի 1870 ամի | 200 |
| Օրբորդաց ուսումնարանի տան տիրոջ տուած է սկսեալ ի 20 յունիսի 1870 ամի . . . . . . . . . . . . | 300 |
| Ողորմութիւն աղքատաց և տնանկաց | 137 |
| Հայոց և Ռուս. երկու տարւոյ (1871 և 1872) համար ստացեալ և ստանալի օրագրաց . . . . . . . . . | 153 10 |
| Փոստայի ծախք . . . . . . . | 59 77 |
| Կազմարարին Ընկերութեան գրադարանի անշքեղ գրեանց կազմելուն . . | 12 |
| Գրատան համար գնած դարանի (շկաֆ) | 50 |
| Խորհրդարանի գրագրին . . . . | 20 |
| Հոգեհանգիստ կատարելոյ վասն ննջեցեալ անդամոց Ընկերութեան . . . | 10 |
| Հեռագրութեանց . . . . . . | 10 |
| Ընկերութեան տպարանի բոլոր որպէս գրաշարների նմանապէս միւս գնեալ տըպարանական պարագայից վերայ տարեկան ծախք է եղել . . . . . . | 1238 20 |
| Ընդ ամէնը | 3784 64 |

Յիշեալ ծախսը եկամտից ի բաց հանելով մնում է առ 1ն Յունվարի 1872 ամի

| | |
|---|---|
| զուտ գումար . . . . . | 11012 17 |
| 45 հատ խաղարկական բիլէթներ | 4702 50 |
| Մուրհակներով ստանալիք . | 3951 |
| Ապառիկ ստանալիք Անդամներից | 500 |
| Տպարանի արժողութիւնն այժմ | 3438 86 |
| | 23604 53 |
| | 27389 17 |

## ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՔ ԱՆՊԱՏՍՊԱՐ ԱՂՔԱՏԱՑ.

Երբ Անգղիա Դաւրիժոյ մահառիթ սովու լուրն լսեց՝ մարդասիրաբար ի գութ շարժելով՝ երեք հարիւր պարսից թուման օժանդակութիւն ուղարկեց ինպաստ աղքատաց տեղւոյս, իւր քաղաքիս հիւպատոսի ձեռամբ նոցա մասնաւորելոյ համար. ուստի հեռատես Անգղիական հիւպատոսն Ջոնս տեղւոյս գերապատիւ և ազգասէր Առաջնորդէն Հայ աղքատաց ցուցակն հանդերձ շնչագրութեամբ խնդրելով՝ ստացաւ, զոր մի հարիւր յիսուն թումանի հետ յանձնելով տեղւոյս աղքատաց հոգատարութեան մասնաժողովոյն անդամոց՝ բաժանել հրամայեց, իսկ միւս մի հարիւր յիսունն Պարսից աղքատաց, ուստի ընտրեալ անձինքն անմիջապէս կատարեցին այս փրկաւէտ հրամանն։ Անգղիական հիւպատոսն բաւական չհամարելով իւրեանց կայսրութեան կողմանէ լիաձեռն ողորմութիւնն՝ վերստին իւր մարդասիրական ողորմութեան սիրոյ հողմով ծածանող դրօշն աղքատաց կենաց փրկութեան վերայ պարզել կամեցաւ, փութացաւ, տումար կազմեց, և թէ մերազնեայ և թէ քրիստոնեայ եղբարցն ստորագրել տուաւ, գումարն ստացաւ, որով չորս հարիւր թուման բաղկացաւ, վասն որոյ հետևաբար դրամաւոր օժանդակութեան դուռն բացուեցաւ, կոչեց իւր մօտ մասնաժողովոյն անդամներն, որոց պաշտօնին ևս կցորդ առնելով զՔասթելի անուն Հելուետիացին, յանձնեց նոցա զայն չորս հարիւր թումանն՝ ապահովապէս մասնաւորել տաճիկ աղքատաց, վասն որոյ և նոքա այս հնարքն կհնարեն, ուր խարդախութիւնն յայտ յանդիման կխայտառակուի, եթէ յիմարաբար միջամտէ. կկոչեն նոցա թաղապետներն, որոցմէ կպահանջեն իւրեանց թաղի աղքատաց ցուցակն շնչագրութեամբ հանդերձ, և կը բերեն. իսկ անդամք իւրաքանչիւր աղքատաց անուամբ տոմսակներ կըգրեն իւրեանց հասանելի դրամոց քանակութեամբ, ըստ ցուցակաց, և կդարձնեն թաղապետաց. որոնցից աղքատներն ստանալով իւրեանց անուանական տոմսակներն՝ կներկայացնեն Պարոն Քասթելին, և իւրեանց յատկացած դրամներն ընդունելով՝ և օրհնելով բարերարաց կեանքն՝ կերթան իւրեանց թշուառ զաւակներն հոգալոյ. որք քաղցու զօրութենէն ընկճած՝ թալկացած դիմօք գորովագութ հօր աչերն կըկիզուն։

Յորմէ՝ Յարգո՛յ խմբագիր, է զի հաւատարմաց միջնորդութեամբ և է զի անձնաւորապէս տեսանելով Ռուսական հիւպատոսն Դաւրիժոյ՝ ինքն ևս ի նախանձ բարի կշարժի ըստ բանին Առաքելոյն, թէ «Նախանձաւորք լերո՛ւք շնորհացն՝ որք լաւքն են». վասն որոյ իւր սեփական դրամօքն տասն խալուար ցորեան և վեց խալուար ածուխ առնելով՝ կամեցաւ կցորդ լինել թշուառաց օգնականութեան, ուստի իւրեան դիմող սովալլուկ աղքատներն թէ Հայ և թէ Պարսիկ՝ կմխիթարէ հայրաբար. ցորեանն հացի փոխանակելով հացագործի հետ. տոմսակներն կցրուէ աղքատաց ըստ շնչոյ, որք ունելով ի ձեռին՝ կներկայանան հացագործին՝ իւրեանց օրական պարեն ստանալու, ոմանք մի լիտր, ոմանք կէս, ոմանք մի քառորդ լիտր. նմանապէս ևս ածուխն. որովք՝ արդարացի խօսելով. բազումք իւրեանց կեանքն շահելով քաղցու ձեռքէն՝ կխնամուին բարեսիրտ հիւպատոսի գթութեան և հովանաւորութեան տակ. որպիսի բարերարութեանց լոյս հրատարակութիւնն կխնդրեմ՝ ազգօգուտ Արարատ ամսագրով։

Մնացական Սարգսեան.

Ի 19 Փետրվարի 1872 ամի. ի Դաւրէժ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.